

**Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

**«Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր»
Վարկային համաձայնագիր թիվ 9681-AM**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2025թ. փետրվարի 19-ից
մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվություն	6
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևանի Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի» (ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության միջև 2024թ. օգոստոսի 8-ին ստորագրված թիվ 9681-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (ԲԷՑ) կողմից իրականացված «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» (Ծրագիր)՝ կից ներկայացված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունը և Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» դրամական միջոցները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև 2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար ստացված և վճարված դրամական միջոցները՝ համաձայն Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի Հանրային ոլորտի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ)՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկային սկզբունքով», Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև թիվ 9681-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

Ի հավելումս.

- Ծրագրի միջոցները օգտագործվել են ընդհանուր պայմաններին և ֆինանսավորման համաձայնագրերին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսողության և արդյունավետության սկզբունքներին, և բացառապես այն նպատակներով, որոնց համար տրամադրվել է ֆինանսավորումը:
- Պայմանագրային գործընկերոջ միջոցները տրամադրվել և օգտագործվել են ընդհանուր պայմաններին և ֆինանսավորման համաձայնագրերին համապատասխան, և բացառապես այն նպատակներով, որոնց համար դրանք տրամադրվել են:
- Ծրագրի շրջանակներում իրականացված գնումներն իրականացվել են ֆինանսավորման համաձայնագրի պայմանների և գնումների վերաբերյալ կիրառելի ուղեցույցների համաձայն:
- Ծրագրի բոլոր գործառնությունների վերաբերյալ վարվել են անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը, գրանցամատյանները և հաշվապահական հաշվառման տվյալները: Տվյալ

Ժամանակաշրջանում կազմված համապատասխան հաշվետվությունները համապատասխանել են հիմքում ընկած հաշվապահական հաշվառման տվյալներին:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ԲԷՏ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որտեղ նկարագրված են հաշվապահական հաշվառման հիմունքները: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են՝ օժանդակելու ԲԷՏ-ի պատասխանատուներին՝ Համաշխարհային Բանկի ուղեցույցներին և թիվ 9681-AM վարկային համաձայնագրի պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրատարակված Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՍ)՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով», Համաշխարհային բանկի ուղեցույցների և թիվ 9681-AM վարկային համաձայնագրի համապատասխան հողվածների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խեղամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում

աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե ԲԷՑ-ի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի նախագահ

Էմիլ Վասիլյան, FCCA

Առաջադրանքի պանախանատու

1 հունիսի 2026թ.

Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն
	2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան	2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան	2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ (Ծանոթագրություն 7)	-	-	-
Ավելացնել. Ստացված դրամական միջոցներ			
Վարկային համաձայնագիր թիվ 9681-AM (Ծանոթագրություն 5)	3,359,000	3,359,000	
Ընդամենը ստացված դրամական միջոցներ	3,359,000	3,359,000	
Նվազեցնել. Վճարված դրամական միջոցներ			
ՀՀՖ#1. Ավտոմատացված վերահսկման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած էլեկտրահաղորդման ենթակայանների հզորության տոկոսային ավելացում (Ծանոթագրություն 6)	3,253,997	3,225,478	28,519
Սկզբնական	100,000	100,000	-
Ընդամենը վճարված դրամական միջոցներ	3,353,997	3,325,478	28,519
Դրամական միջոցների վերջնական մնացորդ (Ծանոթագրություն 7)	5,003	5,003	28,519

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. հունիսի 1-ին:

Հայկ Հայրապետյան

Գլխավոր տնօրենի պաշտոականությունները կատարող Հաշվապահական հաշվառման բաժնի պետ

Ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունը այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 13-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

«Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր»
Վարկային համաձայնագիր թիվ 9681-AM

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ.
դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար (արտահայտված ԱՄՆ
դոլարով)

1 Գործառնությունների բնույթը

«Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիրը» (Ծրագիր), որը ֆինանսավորվում է «Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի» (ՎԶԲ) և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) միջև 2024թ. օգոստոսի 8-ին կնքված թիվ 9681-AM վարկային համաձայնագրի շրջանակներում, իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրաջանցեր» ՓԲԸ-ի (ԲԷՑ) կողմից: ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև կնքված ենթավարկային պայմանագրի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը ԲԷՑ-ին է փոխանցել 40,000,000 ԱՄՆ դոլար, որը պետք է օգտագործվի միայն Ծրագրի իրականացման նպատակով:

Ծրագրի ֆինանսավորումը բաղկացած է հետևյալ մասերից.

Ֆինանսավորման աղբյուր	Գումար
Համաշխարհային բանկ	40,000,000
ՀՀ կառավարություն	30,000,000
Ընդամենը	70,000,000

ԲԷՑ-ը հանդիսանում է ծրագրի հիմնական իրականացնող մարմինը: Այլ իրականացնող մարմիններ են՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ), Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) և էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը (ԷԷՀՕ): Վերջիններս Ծրագրի շրջանակում ծախսեր չեն իրականացնելու, սակայն առանցքային դեր կունենան Ծրագրով նախատեսված մի շարք միջոցառումների իրականացման գործում:

Ծրագրի նպատակներն են ապահովել ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրումն էլեկտրահաղորդման ցանցում և ընդլայնել էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակությունը: Ծրագիրը ԲՄԾ ծրագրի փուլ է և կազմված է հետևյալ միջոցառումներից.

Արդյունքային ոլորտ 1. Էլեկտրահաղորդման ցանցում ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրման ապահովում

- Ենթակայանների հիմնանորոգման աշխատանքներ, ներառյալ, ի թիվս այլնի, գոյություն ունեցող էլեկտրական բաշխիչ կայանների հիմնանորոգում, տրանսֆորմատորների, մարտկոցների, քսայուղերի և պաշտպանիչ ռելեների փոխարինում և կառավարման շենքերի վերանորոգում,
- Գործառնական բարելավումներ՝ էլեկտրահաղորդման ենթակառուցվածքի արդյունավետությունը և հուսալիությունը բարձրացնելու համար, ներառյալ, ի թիվս այլնի, ՍԿԱԴԱ հաղորդակցության և ավտոմատացման համակարգի իրականացման ավարտ՝ էներգետիկ համակարգի հեռավար դիտարկելիությունը և կառավարելիությունը բարելավելու նպատակով, և
- i) մեծածախ էներգետիկ շուկայի հետագա ազատականացում ii) Վարկառուի հաղորդման ցանցի զարգացման տասնամյա ծրագրի պարբերական թարմացում iii) ՀԸԳՀ-ին համապատասխանեցված էներգետիկ նոր օրենսդրության ներդրում:

Արդյունքային ոլորտ 2. Էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակության ընդլայնում

Աջակցության տրամադրում հետևյալի համար.

- ՀԾԿՀ-ին՝ սակագնային նոր մեթոդաբանություն ներդնելու հարցում, որն էներգետիկ բնագավառի ՊՁ-ների համար ապահովում է պատշաճ եկամուտներ և բարելավում է եկամուտների կանխատեսելիությունը,
- ԲԷՑ-ին՝ վարկային վարկանիշ ստանալու հարցում,
- ԲԷՑ-ին՝ առևտրային ֆինանսական գործարքների փորձնական ծրագիրն իրականացնելու հարցում,
- ԲԷՑ-ին՝ ի կորպորատիվ կառավարման համակարգերը բարելավելու հարցում, այդ թվում՝ կորպորատիվ կառավարման լավ գործելակերպերի հետ կապված ԻՍՕ-ի հավաստագրեր ձեռք բերելու հարցում, և
- ԲԷՑ-ին՝ դրա կորպորատիվ կառավարումն արդիականացնելու հարցում:

Ֆինանսական միջոցները կհատկացվեն ԲԷՑ-ին այն ժամանակ, երբ բավարարվեն Հատկացումների հետ կապված որոշակի Ցուցանիշներ (ՀԿՑ), որոնք վկայում են յուրաքանչյուր Արդյունքների Ոլորտի ընդհանուր նպատակների իրականացման առաջընթացի մասին:

ՀԿՑ-ները ներկայացված են ստորև.

- 1) ՀԿՑ#1. Ավտոմատացված կառավարման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ենթակայանի հզորության տոկոսային ավելացում:
- 2) ՀԿՑ#2. Հաղորդման ենթակայանների ընդհանուր հզորության ավելացում:
- 3) ՀԿՑ#3. Էներգահամակարգի պլանավորման, գործարկման և կարգավորման բարելավումներ:
- 4) ՀԿՑ#4. Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման ուղղությամբ առաջընթաց:
- 5) ՀԿՑ#5. Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի ենթակառուցվածքի համար առևտրային կապիտալի մոբիլիզացման ավելացում:
- 6) ՀԿՑ#6. Առաջընթաց ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման համակարգերի արդիականացման ուղղությամբ:
- 7) ՀԿՑ#7. ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման արդիականացման ուղղությամբ առաջընթաց:
- 8) Սկզբնական վճար:

ԲԷՑ-ի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Անդրանիկի 1:

2 Համապատասխանություն

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի Հանրային ոլորտի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ)՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով», Համաշխարհային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև թիվ 9681-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

3.1 Պատրաստման հիմքերը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով: Այս սկզբունքի համաձայն՝ ֆինանսավորումը ճանաչվում է համապատասխան դրամական միջոցների ստացման ժամանակ, իսկ ծախսերը ճանաչվում են համապատասխան դրամական միջոցների վճարման ժամանակ:

3.2 Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝

- ա) Ծրագրի՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանում ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունը, որտեղ առանձին ներկայացված են Համաշխարհային Բանկի և պայմանագրային գործընկերոջ միջոցները,
- բ) Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ պարզաբանող ծանոթագրությունները (ներառյալ լրացուցիչ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և բացահայտումները):

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է ԲԷՑ-ի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է Ծրագրի ֆինանսական

հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և ԲԷՑ-ի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ԱՄՆ դոլարով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա միավորը:

3.4 Ծրագրի ծախսեր

Ծրագրի շրջանակներում առաջացած ծախսերը ճանաչվում են հաշվապահական հաշվառման դրամարկային սկզբունքով՝ դրամական միջոցների վճարման պահին: Վարկային համաձայնագրում սահմանված դրույթների համաձայն՝ 2023թ. փետրվարի 3-ին կամ դրանից հետո կատարված ծախսերը կարող են համարվել Ծրագրի շրջանակում ֆինանսավորման կամ փոխհատուցման ենթակա, պայմանով, որ դրանք համապատասխանում են Վարկային համաձայնագրի կիրառելի դրույթներին և ներառված են հաստատված Ծրագրի ընդգրկման և ծախսային շրջանակում: Ծախսերը ճանաչվում են ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունում որպես «վճարված դրամական միջոցներ»:

3.5 Ծրագրի ֆինանսավորում

Թիվ 9681-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ստացված ֆինանսավորումը ստացված և վճարված դրամական միջոցների մասին հաշվետվությունում ներկայացվում է որպես «ստացված դրամական միջոցներ» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ:

Համաշխարհային բանկի ֆինանսավորումը տրամադրվում է Արդյունքահեն ծրագրի ֆինանսավորման գործիքի միջոցով: Ֆինանսական միջոցները կհատկացվեն ԲԷՑ-ին այն ժամանակ, երբ կատարվեն Հատկացումների հետ կապված որոշակի Ցուցանիշները (ՀԿՑ), որոնք վկայում են յուրաքանչյուր Արդյունքների Ոլորտի ընդհանուր նպատակների իրականացման առաջընթացի մասին:

4 Ծրագրի փակման ամսաթիվ

Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2029թ. հունիսի 30-ը:

5 Թիվ 9681-AM վարկային համաձայնագրի ֆինանսավորում

	2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան	31 դեկտեմբերի 2025թ.
ՀԿՑ վճար	3,259,000	3,259,000
Սկզբնական վճար	100,000	100,000
	3,359,000	3,359,000

6 Վճարված դրամական միջոցներ

	2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան	31 դեկտեմբերի 2025թ.
Աշխատանքներ և ապրանքներ	3,082,123	3,082,123
Խորհրդատվական ծառայություններ	171,874	171,874
	3,253,997	3,253,997
Սկզբնական վճար	100,000	100,000
	3,353,997	3,353,997

Թիվ 9681-AM վարկային պայմանագրով սահմանված առհանման պայմանների համաձայն՝ մինչև 5,321,000 ԱՄՆ դոլարը չգերազանցող հանրագումարի չափով առհանումները կարող են կատարվել ՀԿՑ#1-ի և ՀԿՑ#2-ի հիման վրա, որոնք բավարարվել են մինչև վարկային համաձայնագրի ամսաթիվը, պայմանով, որ նշված ՀԿՑ-ները բավարարված լինեն 2023թ. փետրվարի 3-ին կամ դրանից հետո:

3,253,997 ԱՄՆ դոլարի չափով կանխիկ վճարումները բաղկացած են հետևյալից.

1,691,150 ԱՄՆ դոլար	Վճարումները փոխհատուցվել են ԲԷՑ-ին՝ ՀԿՑ#1-ի հիման վրա, 2023թ. փետրվարի 3-ին կամ դրանից հետո կատարված վճարումների մասով:
1,475,393 ԱՄՆ դոլար	Վճարումները կատարվել են Ծրագրի մեկնարկից առաջ կնքված պայմանագրերի շրջանակում: Ծրագրի իրականացման ընթացքում գործող պայմանագրերով առաջացած պարտավորությունները մարվել են Ծրագրի միջոցների հաշվին:
87,454 ԱՄՆ դոլար	Վճարումները կատարվել են Ծրագրի իրականացման ընթացքում կնքված պայմանագրի շրջանակում: Այդ պայմանագրի համար գնումների ընթացակարգերն իրականացվել են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Աշխատանքներն ու ապրանքները բաղկացած են հետևյալից.

	2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան	31 դեկտեմբերի 2025թ.
«Ագարակ» ենթակայան	773,549	773,549
«Արարատ-2» ենթակայան	330,843	330,843
«Զովունի» ենթակայան	1,977,731	1,977,731
	3,082,123	3,082,123

Խորհրդատվական ծառայությունները բաղկացած են հետևյալից՝

	2025թ. փետրվարի 19-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան	31 դեկտեմբերի 2025թ.
«Փարվանյան Քոնսալթինգ» ՍՊԸ	87,454	87,454
«Արամ Կարապետյան» ԱԶ	84,420	84,420
	171,874	171,874

7 Հատուկ հաշվի հաշվետվություն

Սկզբնական մնացորդ 2025թ. փետրվարի 19-ի դրությամբ	-	
Ավելացնել.		
Աճողական չբացատրված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում ժամանակաշրջանի ընթացքում	3,259,000	
	3,259,000	3,259,000
Նվազեցնել. Հատուկ հաշվից ՎԶՄԲ-ին փոխհատուցում ժամանակաշրջանի ընթացքում	-	
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		3,259,000
Վերջնական մնացորդ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		5,003
Ավելացնել.		
Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	3,253,997	
	3,253,997	3,253,997
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		3,253,997
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

8 ԲԷՑ-ի ստացած գումարների և Համաշխարհային Բանկի փոխհատուցած գումարների համադրում

ՀԿՑ	Դիմում	ԲԷՑ	Համաշխարհային Բանկ	Տարբերություն
ՀԿՑ#1. Ավտոմատացված վերահսկման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած էլեկտրահաղորդման ենթակայանների հզորության տոկոսային ավելացում:				
	DA-02	3,259,000	3,259,000	-
Սկզբնական վճար		100,000	100,000	-
Ընդամենը		3,359,000	3,359,000	-

